Արձանագրություն N 4
«ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2016/6» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «22» հուլիսի 2016թ.
ժամը՝ 15:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ք. Քաբաբյանը

Հանձնաժողովի անդամներ՝ Կ. Գասպարյանը և Ա. Պապյանը

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մովսեսյանը

Ի. Բաց ընթացակարգի հայտերի բացման նիստը շարունակելու մասին
(Ք. Քաբաբյան)

1. Ընդունել ի գիտություն, որ ՀՀ կառավարության 10.02.2011 թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ) 45-րդ կետով սահմանված ժամկետում «ԼԵՎՈՆ ԵՐԿՐՈՐԴ» ՍՊԸ-ն շտկել է արձանագրված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

2. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

ա) Կարգի 46-րդ կետով սահմանված պահանջներին համապատասխան «ԼԵՎՈՆ ԵՐԿՐՈՐԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել «Բավարար», քանի որ համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին,

բ) ներկայացված գնային առաջարկների հիման վրա առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել.

- «Վայքի ՃՇՇ» ՓԲԸ-ին՝ 1-ին չափաբաժնի մասով,
- «ԼԵՎՈՆ ԵՐԿՐՈՐԴ» ՍՊԸ-ին՝ 2-րդ չափաբաժնի մասով,
- «Հրազդանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ին՝ 3-րդ, 4-րդ, 6-րդ և 7-րդ չափաբաժինների մասով,
- «Ճանշին Տեխնախ» ՍՊԸ-ին՝ 5-րդ չափաբաժնի մասով,

գ) առաջարկել ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը,

դ) փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող աշխատանքային օրվա ժամը 15:30-ին, ՀՀ ք. Երևան, Նալբանդյան 28, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն 3-րդ հարկ, N 307 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ք. Քաբաբյան

Անդամներ՝ _____ Կ. Գասպարյան

_____ Ա. Պապյան

Քարտուղար՝ _____ Ա. Մովսեսյան

Արձանագրություն N 3
«ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2016/6» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «20» հուլիսի 2016թ.
ժամը՝ 15:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ք. Քաբաբյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Կ. Գասպարյանը և Ա. Պապյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մովսեսյանը

Ի. Բաց ընթացակարգի հայտերի բացման նիստը շարունակելու մասին
(Ք. Քաբաբյան)

1. Ընդունել ի գիտություն, որ հրավերով սահմանված՝ հայտերի կազմման և ներկայացման, բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին.

ա) համապատասխանում են՝ «Ճանշին Տեխնախ» ՍՊԸ-ի, «Վայքի ՃՇՇ» ՓԲԸ-ի և «Հրազդանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտերը,

բ) չի համապատասխանում՝ «ԼԵՎՈՆ ԵՐԿՐՈՐԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, քանի որ www.armeps.am էլեկտրոնային կայքի (այսուհետև՝ կայք) միջոցով ներկայացված լիցենզիայի և ներդիրի ֆայլը վնասված է ինչը ներբեռնելիս հնարավորություն չի տալիս բացել ֆայլը և գնահատել վերոնշյալ փաստաթղթերի համապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

2. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

- «Ճանշին Տեխնախ» ՍՊԸ-ի, «Վայքի ՃՇՇ» ՓԲԸ-ի և «Հրազդանի ՃՇՇՁ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել «Բավարար», քանի որ համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին,

- ՀՀ կառավարության 10.02.2011 թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետով սահմանված պահանջներին համապատասխան մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը,

- էլեկտրոնային եղանակով տեղեկացնել «ԼԵՎՈՆ ԵՐԿՐՈՐԴ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը,

- նիստը շարունակել 2016թ. հուլիսի 22-ին, ժամը 15:30-ին, ՀՀ ք. Երևան, Նալբանդյան 28, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն 3-րդ հարկ, N 307 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Ք. Քաբաբյան

Անդամներ՝ _____ Կ. Գասպարյան

_____ Ա. Պապյան

Քարտուղար՝ _____ Ա. Մովսեսյան